աջ կողմից իլիկի անջուկ՝ ականջ, որը մեծ մասամբ շինվում է վoսnι ծառի արմատից հանած թելից, իսկ ձախ կողմից՝ լսէոնը՝ իլիկի նստեցրած փայտե, մետաղե կամ կաշվե օղակ։

Թօփը պտտեցնելու համար նէտին՝ առանցքին ուղղահայաց ամրացված է կուռը, իսկ սրան՝ մանիշը[113] կամ շըլտրհօկը[114] կամ շուտվիկը[115], որից մանողը բռնում է։

Թելը մանելուց հետո frբում են frբիշի օգնությամբ, որը արկաթից դամբրշու՝ դարբնի շինած կամ ոսկորե, փայտե կօկլիկ բարակ ձողիկ է, մոտ 10 սմ երկարությամբ։ Զգած թելը մեկ անգամ նրա վրա օլor են գցում և առաջ ու ետ տանելով՝ բոլոր ավելորդ մազիկներից մաքրում և անհարթությունները վերացնում։ Թելը ձգելու համար հաճախ դիմում են շատ նախնական եղանակին։ Կինը նստում է գետնին, առաջ է քաշում մերկ ձախ ոտը, ձախ ձեռքով թելը անց է կացնում ոտի բութ մատի վրայով, իսկ աջ ձեռքով frբիշը մի քանի անգամ ետ ու առաջ է տանում։ Քրքած թելը փաթաթում է ձախ ձեռքի մատների վրա։

Իլիկի վրայից թելն անցնում է վիլաrաrի կամ վիլատուի[116] վրա։ Սա ուղղահայաց առանցքի վրա գագաթի ծակով խաչաձև նստեցրած բարակ ու նեղ տախտակների երկար զույգ աղեղներ են։ Գագաթների խաչաձևման կետով անցնում է առանցքը, իսկ նրանց ծայրերն ուղղված են վեր և հանդիպակաց իրար մոտեցրած են և որոշ հեռավորության վրա պահվում են բարակ հորիզոնական տախտակիկներով։ Նույն առանցքն անցնում է նաև այս տախտակիկների խաչաձևման կետով։ Աղեղների չորս վերին ծայրերը թելով իրար հետ շուրջը կապված են։ Ամբողջ գործիքը պտտեցնում են առանցքի ստորին երկարացրած մասից բռնած։ Թելը փաթաթվում է աղեղների կողերով և այսպես կազմվում են վիլանէր[117]։

Վիլանէրն այնուհետև հագցնում են վիլանիլի[118] տախտին հատատված ուղղահայաց առանցքի վրա։ Հորիզոնական նստեցրած են կենտրոններում շինած ծակերով երկու զույգ բարակ և նեղ տախտակների խաչեր՝ վերևը ավելի կարճ, ներքևն ավելի երկար թէվէրավ։ Այդ խաչերի ծայրերը վերևից ներքև և աջից ձախ միացրած են բրդե հաստ թելերով։ Վիլանէրը հագցնում են կողերի երկար չորս թէվէրի վրա։ Վիլայի՝ կաժի թելի մի ծայրից քաշելով՝ վիլանիլը պտտվում է, թելը արձակվում է ու որևէ բանի վրա փաթաթվելով կծիկնէր է կազմում։

Թել էին պատրաստում, բացի բրդից, նաև բամբակից և մետաքսից։ Բամբակը ձեռք էին բերում Նախիջևանի, Մեղրու կամ Զանգելանի շրջաններից, հնում մեծ մասամբ փոխանակությամբ՝ դիմացը տալով յուղ, պանիր, բուրդ, երբեմն նաև կաշի։ Մետաքսը մասամբ տեղական էր, մասամբ դրսից բերովի, կրկին նույն շրջաններից[119]։

Թելը բազմազան գործադրություն ուներ։ Նրանով գործում էին կոլպա, գորգ, կարպէտ, շալ։

---

113 Բռնակոթ։

114 Խնձորեսկ։

115 Գորիս։

116 Արծվանիկ։

117 Վիլա—MOTOK, կաժ։

118 Վրլանէլ—Արծվանիկ, վրլէն-Գորիս։

119 Հնում նաև Իրանից։